ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2024 թվականի N 168 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1737-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը նվիրաբերություն ընդունելու և Հայաստանի Հանրապետության գանձապետարանում հաշիվ բացելու թույլտվություն տալու, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1737-Ն որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետությունում

Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության հաշվեհամարին փոխանցել փոքր տուն ձեռք բերելու նպատակով Շարժայի բարեգործական տան կողմից նվիրաբերությամբ տրամադրված 40000 (քառասուն հազար) ԱՄՆ դոլարի չափով գումարը, վերադարձը կատարվելու է պետական բյուջեի 900005001954 եկամտային հաշվից, բայց ոչ ավելի, քան 20,371,500.0 դրամը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության բանկային վավերապայմանները Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացվելուց հետո:

3. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության բանկային վավերապայմանները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ